ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Գ. Բ. ԹՈՍՈՒՆՅԱՆ

Ինչպես ժամանակակից հայերենում, այնպես էլ գրաբարում նախադասության առանձին անդամներ արտահայտվում են դերբայով և նրա լրացումով (կամ լրացումներով), այսինքն՝ դերբայական դարձվածով։ Գրաբարում այն կազմվում է բոլոր չորս դերբայներով (անորոշ, անցյալ, ապառնի, ենթակայական) ու հանդես է գալիս և՛ պարզ, և՛ բարդ նախադասության կազմում։

Հայտնի է, որ դերբայական դարձվածի պաշտոնը որոշվում է գերադաս անդամով, այն է՝ դերբայով։ Այդ նշանակում է՝ նախադասության ինչ անդամ որ դառնում է դերբայը, այդ նույն պաշտոնն է կատարում նաև ամբողջ դարձվածը[1]*, իսկ այն գրաբարում կարող է կատարել նախադասության բոլոր՝ գլխավոր և երկրորդական անդամների պաշտոնները։*

Գրաբարի դերբայական դարձվածի մասին չկա հատուկ ուսումնասիրություն։ Քերականներն ու լեզվաբանները իրենց աշխատություններում, կապված դերբայների կիրառությունների հետ, անում են առանձին նշումներ[2]*։*

Սույն հոդվածում V դարի մի քանի մատենագիրների (Եզնիկ Կողբացի, Կորյուն, Փավստոս Բուզանդ, Եղիշե, Մովսես Խորենացի) լեզվի ընձեռած փաստերի հիման վրա ներկայացնում ենք գրաբարի դերբայական դարձվածը՝ շարահյուսական կիրառություններով հանդերձ։

Անորոշ դերբայ[3]**.** *Գրաբարի դերբայական դարձվածի կազմում գործածության ամենաբարձր հաճախականություն ունի անորոշ դերբայը։ Դրանով կազմված դերբայական դարձվածները դառնում են նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ։ Իհարկե, գլխավոր անդամ ասելով նկատի ունենք ենթական և ստորոգելին։*

Քանի որ անորոշ դերբայը հոլովվում է, հետևաբար կարող է կատարել բոլոր այն պաշտոնները, ինչ գոյականը։ Այսպես՝

Ենթակա. *Անորոշով կազմված ենթակա դերբայական դարձվածը գործածվում է ոչ միայն պարզ, այլև բարդ համադասական և ստորադասական նախադասությունների կազմում։ Ենթակա դերբայական դարձվածը գրաբարում ունի բարձր հաճախականություն։ Բերենք մի քանի օրինակներ. «Արարչի այն գործ է՝* **զբնութիւնս** *առնել» (Եզն., էջ 26)*[4]*, «***Ընդ միմեանս բարեխօսելն** *դիտելի էր» (Կոր., էջ 84)*[5]*, «Լաւ է* **յամենայն ժամ նախանձել ի բարիս***» (Բուզ., էջ 66)*[6]*, «Ոչ էր սովորութիւն* **երբէք բարւոյն ընդդէմ դառնալ***» (Եղ., էջ 189)*[7]*։*

Բերենք մեկական օրինակ բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների կազմում. «Սիրելի էր ինձ՝ **յայնժամ զալ փրկչին և զիս օգնել, և առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել***» (Խոր., էջ 66)*[8]*, «Եւ զի՞րդ լինիցի այդ,* **փոխանակել զիմ ախտացեալ աշխարհն ընդ առողջ զազանին***, որոյ առողջութիւնն է մեզ պատուհաս» (Ն. տ., էջ 347)։*

---

[1] *Սույն հոդվածում մենք չենք անդրադառնա նախադասության կողմնակի անդամներին։*

[2] *Տե՛ս Ա. Բագրատունի. Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց. Վենետիկ, 1852, էջ 267—271, 517—555։ Ս. Մալխասյանց. Գրաբարի համաձայնությունը. Թիֆլիս, 1892, էջ 36—38։ Գ. Ե. Ճարաբխանյան. Գրաբարի դասընթաց. Երևան, 1974, էջ 230—234, 238—241 և ուրիշներ։*

[3] *Նկատի ունենալով, որ յուրաքանչյուր դերբայ դրսևորում է իր յուրահատկությունները, նպատակահարմար գտանք դրանցով կազմված դերբայական դարձվածները տալ առանձին-առանձին։*

[4] *Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց. Վենետիկ, 1826։*

[5] *Կորիւն. Վարք Մաշտոցի. Երևան, 1941։*

[6] *Փաւստոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883։*

[7] *Եղիշէ. Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. Երևան, 1957։*

[8] *Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913։*

Ստորոգելի. Անորոշ դերբայով կազմված ստորոգելի դերբայական դարձվածը գրաբարում ունի շատ սահմանափակ կիրառություն։ Մեր ընտրանքում գտել ենք մի քանի օրինակ միայն։ «Եւ արդ յայտ է՝ եթէ ասելն Աստուծոյ, թէ դՅակոբ սիրեցի և զԵսաւ ատեցի, կանխաւ դիտել է. յԻ սա սիրելի լինելոց է յիւրոց բարուց և նա ատելի» (Եզն., էջ 172)։

Մատենագիրների երկերում շատ հաճախ հանդիպում ենք միադիմի բայ+անորոշ դերբայ կաղապարին, որը կազմում է բարդ ստորոգյալ[9]։ Օրինակ՝ «Արդ դու որ մարզպանդ ես աշխարհիս, պարտ է քեզ փոյթ յանձին ունել. գրել և ցուցանել յարքունիս զմիաբանութիւն բրնութեանս» (Եզ., էջ 61)։

Որոշիչ. V դարի գրաբար մատենագրության մեջ որոշիչ դերբայական դարձվածով օրինակներ քիչ ենք գտնում։ Այդպիսի էառույցների համեմատաբար շատ ենք հանդիպում Փավստոս Բուզանդի երկում։ Օրինակներ. «Այլ զորութիւն իմն զգայուն լաւութեանց հաստատեցաւ յԱստուծոյ, ե ի թշնամութենէ ընդ մարդոյն ունելոյ» (Եղն., էջ 53)։ «Եւ ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝ եղին առաջի նորա միրգս (Բուզ., էջ 174)։ «Էր ժամանակն զայդիսն յատելոյ» (Ն. ա., էջ 227)։

Հատկացուցիչ. Հատկացուցիչ դերբայական դարձվածն ունի սահմանափակ կիրառություն։ Օրինակներ. «Նախ յայսմ գնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագանին» (Բուզ., էջ 135)։ «Այս ամենայն յերկար խռովութինք... պատճառք եղեն շարձակելոյ նախարարացն Հայոց» (Եղ., էջ 199)։

Բացահայտիչ. Այսպիսի դերբայական դարձվածի ևս շատ քիչ ենք հանդիպում։ Օրինակներ. «Բայց միայն մի ինչ ծնունդ է՝ զոր մարդիկ հնարեցան արտաքոյ կարգաց բնութեան, ծնուցանել ի դիոց և յիշոց ջորիս» (Եզն., էջ 121)։ «Յանձն առ պաշտել զօրէնս մոգութեանն, այս ինքն երկիր պագանել կրակի և ջրոյ և արեգական» (Բուզ., էջ 136)։

Գրաբարում ավելի շատ են տարածված անորոշ դերբայով կազմված խնդիր և պարագա դերբայական դարձվածները։

Հանդիպում ենք զանազան խնդիր դերբայական դարձվածների՝ կազմված անորոշ դերբայով։ Դրանք հանդես են գալիս և՛ պարզ, և՛ բարդ նախադասությունների կազմում։

Ուղիղ խնդիր. Անորոշ դերբայով կազմված ուղիղ խնդիր դերբայական դարձվածն ունի լայն կիրառություն։ Այսպես՝ «Տեսանէր ոք... զքաւազլոր խաղալ սողալ վիրաւորացն» (Եզ., էջ 119)։ «Խոստացաւ երկրորդ անգամ գալ անաւար զօրութեամբ յարուցանել զմեռեալս, նորոգել զդրոյթ աշխարհս, առնել դատաստան արդար ի մէջ արդարոց և մեղաւորաց, տալ պարգեւս արժանաւորաց, և նատուցանել պատիժս չարագործաց» (Ն. տ., էջ 40)։ «Խնդրէին ի նմանէ ամբաստանել զԱրտաշրէ» (Խոր., էջ 348)։

Գրաբարում գործածվում են բոլոր տեսակի անուղղակի խնդիրներով դերբայական դարձվածներ՝ կազմված անորոշ դերբայով։ Դրանց շարքում կան և այնպիսիները, որոնք ձևավորվում էն անորոշ դերբայի հոլովաձևերով և որևէ նախդրով կամ նախադրությամբ։ Անուղղակի խնդիր դերբայական դարձվածներն են՝

Հանգման. Այսպիսի դերբայական դարձվածի շատ հազվադեպ ենք հանդիպում։ Օրինակ՝ «Եւ ամենեքին չերդնուլն՝ սուտ չերդնելոյ ոչ եթէ ընդդէմ ինչ է, այլ յոյժ ընկերակից» (Եզն., էջ 278)[10]։

Անչատման. «Վասն այնորիկ ինչ արգելաւ մարդն ի ճաշակելոյ ի նմանէ» (Եզն., էջ 47)։ «Եւ կանոն. հրաժարել ամենեքին ի մեռելոտուոյ և յարեանէ ուտելոյ. և ի դաշտանիկն մերձենալոյ» (Բուզ., էջ 64)։

Միջոցի. Այս տիպի դերբայական դարձվածները երբեմն համատեղում են ձևի պարագայի իմաստը։ Օրինակներ. «Մեծարեցեր զարեգակն՝ յառաջ ձայնելով զանուն նորա» (Եղ., էջ 162)։ «Անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր, սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով՝ չանային տիրել ի վերայ միմեանց» (Խոր., էջ 33)։

Վերաբերության. Այն ձևավորվում է նախադրություն+անորոշ դերբայի սեռական կաղապարով։ Դրան ամենից շատ հանդիպում ենք Փավստոս Բուզանդի երկում։ Օրինակ՝ «Ցաղագս քաղաւորելոյ Պապայ յերկրին Յունաց, և գալոյ ի Հայս, և յինքն ունելոյ զաշխարհ իւր» (Բուզ.,

---

9 Տե՛ս Գ. Ջահուկյան. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները. Երևան, 1974, էջ 412։

10 Այս դերբայական դարձվածը համատեղում է նաև ընդդիմության իմաստը։

էջ 155)[11]։ «Հրաման զոր տայր յաղագս կծծոյն շղնելոյ՝ այնմ ինչ որ ոչ անսացէ» (Ն. տ., էջ 218)։

Համապատասխանության. Սա հազվադեպ հանդիպող դերբայական դարձվածներից է։ «Որոց ջուրն ըստ առնել լուանին՝ առնէ, ըստ լնուլն՝ լնու, և ըստ պակասելն պակասէ» (Եզն., էջ 215)։

Փոխարինման. «Մի՞թէ յորմէ զորդի՞ն խնդրեաց, թէ գուցէ ընդ որդոյն տալոյ՝ զնա բաժանոնուցու» (Եզն., էջ 129)։

Բացառման. Ունի սակավ գործածություն։ «Առանց մի ինչ բարիս գործելոյ լինիցի՞ նաքարողիչ ամենեցուն» (Եղ., էջ 57)։

V դարի գրաբար մատենագրության մեջ ավելի շատ ենք հանդիպում պարագա դերբայական դարձվածների, որոնք կազմվում են կա՛մ միայն դերբայով և նրա լրացումներով, կա՛մ դերբայի ու որևէ նախդրի կամ նախադրության զուգորդությամբ։ Բարձր հաճախականություն ունեն նպատակի, պատճառի, ձևի, ժամանակի, հիմունքի պարագա դերբայական դարձվածները։ Պարագա դերբայական դարձվածներն են՝

Ձևի. Բոլոր մատենագիրներն էլ շատ են գործածել։ Օրինակներ. «Նորա առանց իրիք գրադելոյ՝ համդերձ գործակցօք իջեալ ի թիկունս դիպացն պատահելոց» (Կոր., էջ 82)։ «Յողոցն հանել՝ երբեմն յիշատակաւ լինի, և երբեմն առանց յիշելոյ զոք» (Եզն., էջ 177)։ «Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղացաք գնացաք յերկիրն Յունաց» (Եղ., էջ 9)։ «Վիշապաձայն որոտալով. զազանաբար գոչելով առհասարակ դողացուցանէր զտիեզերական զիւր իշխանութիւնն» (Ն. տ., էջ 44)։ «Որում ի դիմի հարեալ վանէ՝ փախստական արկանելով ի կոզի ինչ առիական ծովուն» (Խոր., էջ 46)։

Ժամանակի. Այս դերբայական դարձվածի կազմում դերբայը սովորաբար գրվում է կա՛մ գործիական հոլովով, կա՛մ որևէ նախդրի ու նախադրության զուգակցությամբ։ Գործածության հաճախականությամբ վերջինները գերակշռում են առաջիններին։ Օրինակներ. «Եւ ամենայն քաղաքացն պատանելով. ի քաղաքին պայծառագոյն երեւէին» (Կոր., էջ 68)։ «Յայգ ի մտանել արեգականն՝ առաւել պայծառացեալ զլոյս լուսնի տեսանեն» (Եզն., էջ 215)։ «Նա և արդ օրհասականք ընդ վախճանել շնչոցն հզօրագոյնք կռուին» (Եղ., էջ 8)։ «Յետ ծնանելոյ զորդի իւր զԱրտաշէս ի Բաբելոնի՝ չու արարեալ գնայ յերկիրն Արարատայ» (Խոր., էջ 33)։

Նպատակի. Այն արտահայտվում է անորոշ դերբայի տրական, հայցական հոլովաձևերով կամ անորոշ դերբայի տարբեր հոլովաձևերի և որևէ նախդրի ու նախադրության զուգակցությամբ։ Օրինակներ. «Զնոյն հարցն նորոգեաց զառաքելաշնորհս, նոյն զործ երեւեալ անվնասպանելոյ յանհրեւոյթ բշնամեացն և յայտնեացն» (Բուզ., էջ 62)։ «Զաներեօքն գտանէ պատրաստական առ ի կորուստ ամբարշտին զոմանս խորանաւորս հուր լուցեալ և ջամփուր երկաթի՝ մխո խոռովելոյ» (Խոր., էջ 305)[12]։

Այս դերբայական դարձվածին ավելի շատ ենք հանդիպում նախդիրների կամ նախադրությունների զուգակցությամբ։ Օրինակներ. «Որք կապեալ էին ի կռապաշտութեանն անլուծանելի հանգուցիւք, վառեալք և չեռեալք իբրև զհնոց առ այրել զախտ սուրբ եկեղեցւոյ» (Եղ., էջ 8)։ «Ջայլումք ես զանց առնէ, անբաւական զժամանակն առ ի կարգի պահելոյ» (Կոր., էջ 26)։ «Աբրահամ վասն զոտարս և զաղքատս ընդունելոյ՝ բարեկամ Աստուծոյ կոչեցաւ» (Եզն., էջ 276)։ Վասն նախադրության խնդիրը սովորաբար դրվում է սեռական հոլովով, բայց երբեմն հանդիպում ենք օրինակների, երբ անորոշ դերբայը գործածվում է հայցական հոլովով։ Նման փաստեր գտնում ենք Փավստոս Բուզանդի երկում։ «Ապա արձակէր զիշխանս պատուականս ի հնազանդութիւն խաղաղութեան վասն զերեղարձ առնել ի կայսերէն միաանգամ» (Բուզ., էջ 49)։ «Գանձս բազումս և անթիւս վասն զմիտս հանել թագաւորին Արշակայ, ի ձեռս Վարդանայ և որք ընդ նմա էին, առաքէր» (Ն. տ., էջ 88)։

Պատճառի. Այդ դերբայական դարձվածում դերբայը գործածվում է կամ բացառական հոլովով կամ որևէ նախդրի ու նախադրության զուգադիր։ Օրինակներ. «Ապա եթէ ի չկարելոյ Աստուծոյ բառնալ զչարիսն եթող նոյնպիսի, այնու տկարութիւն ածեն զԱստուծով» (Եզն., էջ 31)։ «Եւ առ մեծկել սրտին՝ չգիտէր յո՛ թափէր զթոյնսն դառնութեան» (Եղ., էջ 142)։ «Ջան-

---

[11] Յ ա ղ ա գ ս նախադրությունը վերաբերում է նաև այդ նախադասության վերջին երկու բաղադրիչներին։

[12] Դա գրաբարում շատ հազվադեպ հանդիպող, իսկ աշխարհաբարում շատ տարածված նպատակի տրականն է։

խուկ ի ժողովրդենէ յինէր, յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ» (Խոր., էջ 317)։ Վասն նախադրությամբ ձևավորված պատճառի պարագա դերբայական դարձվածում դերբայը սեռականից բացի կարող է դրվել նաև հայցական հոլովով։ Այսպիսի կաղապարների հանդիպում ենք Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ։ Օրինակ. «Ունիմ ի մտի և զՎեփաղիոնին, վասն ոչ տալ զմեզ բազմաց Ծաղրել» (Խոր., էջ 56)։ «Յորոց միայն ի տեսութենէն զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ ինչ և մերն, վասն ոչ կարել հայել ընդդէմ արեգական ծագման» (Ն. տ., էջ 304)։

Հիմունքի. Հիմունքի պարագա դերբայական դարձվածը ցույց է տալիս գործողության կատարման հիմունքը։ Այն արտահայտվում է անորոշ դերբայի գործիական հոլովով կամ ըստ նախդրով ու անորոշի տրականով։ Օրինակներ. «Զերկուսն ի միոջէ պատճառէ անտի դնելով, ցուցին՝ թէ մերձեցան ի դրունս ճշմարտի գիտութեանն» (Եզն., էջ 203)։ «Յառաջապելս զճշմարիտ բանս ախորժելով փոփոխել փութացէ» (Խոր., էջ 22)։ «Ոչ ըստ կամել է, ոչ ըստ ընթանալ, այլ ըստ Աստուծոյ ողորմելոյն» (Եզն., էջ 168)։

Հակառակ հիմունքի. Ցույց է տալիս այն հիմունքը, հակառակ որի կատարվում է գործողությունը։ Ունի հազվադեպ գործածություն։ Օրինակ՝ «Երկնչելով ի Պարսից և ի հեռաց իւրոց Արծրունեաց՝ ոչ իշխէր զատչել ի Յունաց» (Խոր., էջ 310)։

Հետևանքի. Ցույց է տալիս գործողության կատարման հետևանքը։ Հանդիպում ենք հատուկենտ օրինակների։ «Ոչ ինչ խնայեցին զանգիտելով իբրև զանարի՝ գոլով վատասիրտք» (Եղ., էջ 98)։

Միաժամանակյան. Այն կազմավորվում է ընդ նախդրի և զհետ, հետ, հանդերձ ու այլ նման նախադրությունների զուգակցությամբ։ Օրինակներ. «Արդ յայսմ հետէ և անդր, ուր սպրդեալ անկանի երկպառակութիւն ի ներքս, ընդ հակել միաբանութեանն՝ և երկնաւոր առաքինութիւնն հեռանայ» (Եղ., էջ 89)։ «Ուր և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրութեան» (Կոր., էջ 50)։

Չափի և աստիճանի. Ցույց է տալիս գործողության կատարման չափը և աստիճանը։ Ունի գործածության բարձր հաճախականություն։ Մեծ մասամբ ձևավորվում է այնչափ... մինչեւ նառապարով։ Օրինակներ. «Եւ այնչափ յանդգնեալ սատանայութեան հոգւովն, մինչև ի պատգամաւս Հոգւոյն Սրբոյ հաղ հանել՝ զկէս աւետարանի ընտրել առնուլ. և զկէսն իբրև զխոտան ի բաց թողուլ» (Եզն., էջ 253)։ «Եւ այնչափ փոյթ ի վերայ ունելով՝ և դայեկաբար սնուցանել և խրատել. մինչև ի նոցունց իսկ ի վայրենեացն եպիսկոպոս եկեղեցւոյն Սիւնեաց կարգել» (Կոր., էջ 60)։ «Զնոյն բանս ատենին ահագինս բարբառէին ի լսելիս նոցա, մինչև խուճապել նացա ընդ միմեանս, դեռ ևս գիրեարս սատակէին» (Եղ., էջ 180)։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ V դարի գրաբար մատենագրության մեջ անորոշով կազմված դերբայական դարձվածները ունեն գործածության բարձր հաճախականություն։ Դերբայական դարձվածի կիրառությունը հիմնականում ոճական նշանակություն ունի. նրա միջոցով արտահայտվում են զանազան իմաստներ ու նրբիմաստներ։

Անորոշով կազմված դերբայական դարձվածի կազմում դերբայը հանդես է գալիս երկու ձևով. նախ՝ հոլովաձևերով, և ապա՝ առանձին նախդիրների ու նախադրությունների զուգորդությամբ։ Կան նախադասության այնպիսի անդամներ, որոնք առանց այդ սպասարկու բառերի հնարավոր չէ արտահայտել։

Անցյալ դերբայ. Անորոշ դերբայից հետո գործածության հաճախականությամբ երկրորդը անցյալ դերբայն է, որ կազմում է դերբայական դարձվածներ։ Հայտնի է, որ անցյալ դերբայը օժանդակ բայի հետ միասին կազմում է գրաբարի վերլուծական ժամանակները։ Բայց այն դառնում է նախադասության տարբեր անդամներ նաև ինքնուրույն գործածությամբ։ Ահա այդ դեպքում է, որ նա կարող է ունենալ իրեն լրացնող անդամներ և կազմել դերբայական դարձված։

Գրաբարում հանդիպում ենք անցյալ դերբայով կազմված բազմաթիվ դերբայական դարձվածների, որոնք կատարում են շարահյուսական տարբեր պաշտոններ։ Դրանք լինում են և՛ գլխավոր, և՛ երկրորդական անդամներ։ Բայց այս դերբայով կազմված դերբայական դարձվածները անորոշով կազմվածների համեմատ դրսևորում են ավելի քիչ իմաստներ ու նրբիմաստներ։ Դրանով ամենից շատ հանդիպում ենք որոշիչ և ձևի պարագա դարձվածների։ Անցյալով կազմված դերբայական դարձվածներն են՝

Ենթակա. «Արդ մերկացեալք ի փառացն՝ դիւարար արեգակա՞ն կաքաւիցէք» (Եղ., էջ 55)։ Բայց այդպիսի կառույցներում ավելի ճիշտ բացահայտիչ է, որովհետև տվյալ դեպքում բացահայտյալը՝ դուք, դեղչված է։

Բացառայտիչ. Այդպիսի կիրառությամբ դերբայական դարձվածների ավելի շատ ենք հանդիպում, որոնցում, ինչպես արդեն ասվեց, բացահայտիչը կատարում է նախադասության տարբեր անդամների պաշտոն։ Օրինակներ. «Ի բաց կաց յինէն ծառայ չարագործ տիրացեալ տեառն քոց» (Բուզ., էջ 142)։ «Նոքա նոցին նմանեալք՝ զնոյն անառակութիւնս անխտիր գործեցեն» (Եզն., էջ 123)։ «Եւ մանկունք քաջ նախարարացն Հայոց, ինքնակալ նահատակեալք, մտին ի մէջ ճակատուցն» (Խոր., էջ 303)։

Որոշիչ. Որոշիչ դերբայական դարձվածը բոլոր մատենագիրներն էլ շատ են գործածել։ Օրինակներ. «Եւ այլք զգերեզմանս կրկտեն, և զբաղեալ մարմինս ընդ հողով՝ մերկացեալ խայտառակեալ արևու ցուցանեն» (Եզն., էջ 19)։ «Ջկռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր» (Եղ. էջ 136)։ «Մտաք յեգիպտոս, յաշխարհն համբաւաւոր... ամենայն պտղովք առլցեալ» (Խոր., էջ 344)։

Հատկացուցիչ. Նման դերբայական դարձվածի հանդիպում ենք բոլոր մատենագիրների երկերում։ Օրինակներ. «Ջատագով ամենայն գրկելոց լինէր նա» (Բուզ., էջ 50)։ «Այլ խափան լիցի իւր յառաջեւ նման բազում մակարդ մեղացն իւրոց գործելոց» (Ն. տ., էջ 98)։ «Զդանկոյ երկուց ընծայելոցն գովէ զարկանելեացն զյօժարութիւն առաւել քան զմեծացն» (Կոր., էջ 30)։ «Յայսմ վայրի փութացաւ վաղվաղակի կատարել զհրամանն միաբան հաւանեցելոցն յաստուածային առաքինութիւնն» (Եղ., էջ 190)։

Գրաբարում ավելի շատ են տարածված անցյալ դերբայով կազմված բայական անդամի դերբայական դարձվածները, որոնք կատարում են խնդիրների և պարագաների պաշտոններ։ Այսպես՝

Ուղիղ խնդիր. Ունի բարձր հաճախականություն։ Օրինակներ. «Վարդապետին զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւնն կարգէր... և զոմանս ի յունական դպրութիւնն» (Կոր., էջ 46)։ «Եւ զամենայն ասացեալս արարից և կատարեցից առ մնացորդս աշխարհին» (Եղ., էջ 48)։ «Այլ և նաշ ասեն գործեալ Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի (Խոր., էջ 84)։ «Զայս ամենայն զգործեցեալսն Եւուանդայ պարգևէ մեծն Տրդատ» (Ն. տ., էջ 167)։

Հանդիպում ենք տարբեր տիպի անուղղակի խնդիր դերբայական դարձվածների, ինչպես՝

Մատուցման. Նման դարձվածը հազվադեպ է գործածվում։ Օրինակ՝ «Տացէ հրաման երկնաւոր մշակացն ընդ նմա իջելոց ի վերուստ ի գերեզմանացն հնձել զամենայն ննջեցեալսն յարուցեալս» (Բուզ., էջ 96)։

Հանգման: Ունի սահմանափակ կիրառություն։ Դրան հանդիպել ենք միայն Փավստոս Բուզանդի երկում։ Օրինակներ. «Տիրադրուժք իւրեանցակուռ ձուլելոյն երկիր պագանէին» (Բուզ., էջ 20)։ «Որ ամենայն տառապելոց ունկնդիր էր» (Ն. տ., էջ 94)։ «Իսկ թագաւորն ծաղր առնէր զբանսն կաթողիկոսին, և մկթայր զնորա զասացելովքն» (Ն. տ., էջ 95)։

Միջոցի. Գտնում ենք հատուկենտ օրինակներ։ «Այր սրտեայ էր և անդամովք եռկար... ամրացեալ պղնձով և երկաթով, և այլովք ընտիր վառելովք» (Խոր., էջ 107)։

Անջատման. Սրան ջատ հազվադեպ ենք հանդիպում։ Օրինակ՝ «Հրաման տայր ...թափել զերծանել յունայնավար հնացելոցն» (Խոր., էջ 72)։

Համեմատության. Այդպիսի դերբայական դարձվածը ձևավորվում է իբրև. որպէս նախադրությունների միջոցով։ Օրինակներ. «Սկսան իբրև արբեալք անզգայք դիմեմամբք ելանել ի բանից պատասխանիս» (Եղ., էջ 161)։ «Արտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և չարչարեալք է յոգիս իւրեանց զաղղարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրով (Եղ., էջ 203)։

Վերաբերության. Այն կարող է արտահայտվել կամ անցյալ դերբայի պատմական բացառականով, կամ որևէ նախդրի ու նախադրության զուգորդությամբ։ Օրինակ՝ «Պատմեցաւ նոցա յարքայէ վասն գտելոյն ի Դանիէլէ» (Կոր., էջ 44)։

Ընդդիմության. Արտահայտվում է ընդդիմության նախադրություններով և անցյալ դերբայի սեռականով։ Օրինակ՝ «Եւ սկսաւ նախանձ վարել ընդդէմ յառաջագոյն կանոնելոցն ի նմանէ» (Բուզ., էջ 192)։

Փոխարինման. Ձևավորվում է փոխանակ, փոխարէն, ի տեղի նախադրություններով և անցյալ դերբայի սեռականով։ Օրինակ՝ «Փոխանակ յետս կացելոցն՝ որ ելին զհետ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս ի տեղի նոցա մատուցանէր» (Եղ., էջ 99)։

Պարագա դերբայական դարձվածներն են՝

Ձևի. Ցույց է տալիս գործողության կատարման ձևը և ունի գործածության բարձր հաճախականություն։ Օրինակներ. «Եւ միւսն զառիւծու կորիւն սնուցեալ՝ ածէ ի համբոյր և ի քծինս» (Եզն., էջ 69)։ «Նա... գուցէ ի հիմանէ խարխարեալ աւերէ զօրէնս մեր» (Եղ., էջ 158)։

«Կէս դիմաց նորա ի վայր բերեալ սուսերաւ, զաղթութիւն ստացեալ՝ մեռանի ի վերայ այսպիսեաց» (Խոր., էջ 172)։

Վիճակի. Ցույց է տալիս գործողության կատարման վիճակը։ Օրինակ՝ «Թէ ճշմարտիւ ոք ցննիցէ դիրսն՝ գտանէ յանենարին վտանգս եկեալ զհիւղն» (Եղն., էջ 31)։ «Զձեռսն իւր ի վեր տմբարձեալ՝ կայր յաղօթս» (Եղ., էջ 150)։

Ժամանակի. Այս դերբայական դարձվածի կազմում դերբայը կարող է մնալ ուղիղ ձևով կամ զուգորդվել առանձին նախդիրների ու նախադրությունների հետ։ Օրինակներ. «Եւ մեք դեռ ի հեռաւոր ճանապարհի, և ոչ մի ինչ գործ պատերազմիս ի գլուխ երթեալ, և դուք աստէն ցիմում տանս յարուցէք ի վերայ իմ պատերազմ» (Եղ., էջ 84)։ «Հանեալ ի բաց զտէրութիւնն ի նմանէ՝ ընկալաւ զվճիռ մահու» (Ն. տ., էջ 13)։ «Եւ ի պարտութիւն մատնեալ զնգին Նապհայ. դառնայ անդէն ի Մծբին» (Խոր., էջ 287)։ «Յետ ամաց վեցից անցելոց վախճանի երանելւոյն Սահակայ... նովին հոգեւորն վարուք հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումն» (Կոր., էջ 92)։

Նպատակի. Գործածության շատ բարձր հաճախականություն չունի։ Օրինակներ. «Իսկ սոքա... ի մահուն իւրեանց զմիամտութեանն հաստատութեանն զանձինս փոխանակ տալով ընդ ճշմարտութեանն տեառն, մատուցին... ի վերայ անքիւ նոր ի Քրիստոս մկրտելոցն» (Բուզ., էջ 24)։ «Ժողով սուրբ եպիսկոպոսացն և ամենայն ուխտ քահանայութեանն դառնապէս արտասուս իջուցանէին ի վերայ շարաչար վշտացելոցն» (Եղ., էջ 81)։

Պատնառի. Շատ հաճախակի հանդիպող դերբայական դարձվածներից է։ Օրինակներ. «Տիրիթ, զանի հարեալ յարմայէն՝ գիշերի փախստական լինէր» (Բուզ., էջ 104)։ «Իսկ նորա մոռացեալ զպատուիրանն Աստուծոյ. խաբեցաւ զկնի մոլար խաբէութեանն» (Եղ., էջ 37)։ «Ամենայն բնակչաց երկրի զանի հարեալ ի մեծ նշանէն. ինքեանք, ինքեանց ձեռօք զկրակատունսն այրէին» (Ն. տ., էջ 70)։

Հիմունքի. Այս դարձվածի կազմում դերբայը կարող է հանդես դալ կա՛մ ինքնուրույնաբար, կա՛ս ըստ նախդրի հետ միասին։ Օրինակներ. «Յաղագս թէ որպէս ի բանս շարախորհուրդս և անմիտ մարդկան եկեալ թագաւորն Վարազդատ, և զզօրավարն Հայոց զՄուշեղ սպանանէր» (Բուզ., էջ 154)։ «Որում իրազգած եղեալ արաքային Երուանդայ՝ հետախոյզ առաքէ» (Խոր., էջ 163)։ «Այսն հողմ է, և հողմն՝ ոգի ըստ յառաջագոյնն ասացելոյ» (Եղն. էջ 92)։

Այսպիսով, անցյալ դերբայով կազմված դերբայական դարձվածները բավական լայն տարածում ունեն V դարի գրաբար մատենագրության մեջ։

Ենթակայական դերբայ. Քանի որ ենթակայական դերբայում անվանական իմաստը գերակշռում է բայականին, հետևաբար դրանով այնքան էլ շատ դերբայական դարձվածներ չեն կազմվում։ Դրանով կազմված դերբայական դարձվածները կատարում են նախադասության տարբեր անդամների պաշտոն, բայց ամենից շատ դառնում են գոյականական անդամ՝ ենթակա, ստորոգելի, հատկացուցիչ, բացահայտիչ, որոշիչ։ Ստորև դրանք ներկայացնենք առանձին-առանձին։

Ենթակա դերբայական դարձված. Գրաբարի ամենից շատ գործածվող դարձվածներից է։ Օրինակներ. «Այս են Հայոց խոստովանողք կատարեալք» (Եղ., էջ 187)։ «Ժողովեցան... յայն տեղի ամենայն... գերվողք, յափշտակողք» (Բուզ., էջ 91)։ «Յարահետևողք իմաստասիրացն և վերահայեցողք չափաբերապէս մակադրութեանց՝ զաստեղս ի լուսնոյ ասեն ընծուիլ» (Խոր., էջ 343)։

Ստորոգելի. Ունի լայն տարածում։ Օրինակներ. «Հայեցեալ յելս գնացից նոցա, նմանողք եղերուք հատուցն» (Կոր., էջ 34)։ «Բարեաց կամեցող է Աստուած» (Եղն., էջ 174)։ «Թէ Նմա նմանող չկարէր լինել, գոնեայ հիւղեայն լիցի նմանող» (Ն. տ., էջ 251)։ «Քանզի էր արդարն համբերող. ժուժեալ և առաւել իմաստուն» (Խոր., էջ 224)։ «Որում լսող եղեալ քաղցր և մեծն Թէոդոս զօրավար՝ դառնայ առ կայսր» (Ն. տ., էջ 292)։ «Վիճակաւորք հպարտք, դատարկանացք, դրաբանք, ծոյլք, ատեցողք արուեստից և վարդապետական բանից» (Ն. տ., էջ 364)։

Գրաբարում ավելի քիչ ենք հանդիպում -իչ մասնիկով տարբերակով կազմված դերբայական դարձվածների։ Օրինակ՝ «Ոչ երբեք լեալ է Զրուանայ հայր աստուածոց, և ոչ տուիչ բազատութեանց» (Եղն., էջ 138)։ «Եւ էր... հանապազ կցորդ հոգոց և բարձիչ վշտաց աղօրիւ իւրովք» (Բուզ., էջ 156)։ «Մեք մեզէն լինիմք բակիչք օրինացն մեռոց» (Եղ., էջ 158)։ Բոլոր օրինակներում էլ դերբայական դարձվածը կատարում է ստորոգելիի պաշտոն։

Որոշիչ. Օրինակներ. «Առաքեաց հրեշտակութեամբ զայր մի պատուական յաշխարհիս և

հաւատարիմ իւր... յոյժ փափագող Նորին գործոյ, առ Հարելս այնս (Խոր., էջ 326)։ «Գտանէ և անդ զոմն ապականիչ երկրին իւրոյ» (Ն. տ., էջ 45)։

Հատկացուցիչ. Այդպիսի դերբայական դարձված կազմում է միայն -ող մասնիկով տարբերակը։ Օրինակներ. «Իւրաքանչիւր ստացուածք ոչ ինչ համարէին յաչս ստացողաց իւրեանց» (Եղ., էջ 67)։ «Յայնժամ ամենեքեան ի նախանձ բարկութեան բրդեցան, մինչև ամենայն տեսողացն երիկամունքն դողային» (Ն. տ., էջ 66)։ «Վասն զի կան պահին արդարոցն և հաւատացելոցն լուսաւորք Թագքն արքայութեանն յաւիտենից ժամանակին, և բերանաւատիցն ծըլխտողացն և անհնազանդիցն ժպրհութեանն պատիժք» (Բուզ., էջ 73)։

Բացահայտիչ. օրինակ՝ «Զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիմպ քուրմ Հանւոյ, գրող մեհենական պատմութեանց» (Խոր., էջ 176)։

Երբեմն հանդիպում ենք մասնական բացահայտիչ դերբայական դարձվածների, որոնք հանդես են գալիս և՛ պարզ, և՛ բարդ նախադասությունների կազմում, ինչպես՝ «Ել հրաման յարքունուստ աքսորել զմեծն Ներսէս, որպէս զմի անգամ խաբօղ և դրժօղ արքայի (Խոր., էջ 294)։ «Որում ոչ ինչ ունկնդիր եղև Տիրան, քանզի երկեաւ ի Յուլիանոսէ, զմտաւ ածելով՝ մեռանել ինքեան իբրև զկռիւող թագաւորական պատկերի» (Ն. տ., էջ 272)։ «Զմերոյ լուսաւորութեան հոգևոր վերակացուէ ճառելով, զ'ի Քրիստոսէ հանուրց եղելոցս ճշմարիտ Թագաւորէ՝ հրաշափառագունիւ պարտ էր անցանել բանիւ, որպէս զգործակցէ և զճաւասար Եզնողէ մերոյ նախաշաւղի և լուսաւորութեանց Նահապետի» (Ն. տ., էջ 245)։

Ենթակայական դերբայով կազմված դարձվածները կատարում են նաև խնդիրների և պարագաների պաշտոն։ Գործածության հաճախականությամբ խնդիրները գերակշռում են պարագաներին։

Ուղիղ խնդիր. օրինակներ. «Զօրութիւն իմն ծածուկ կառավար, որ զչարս կազմողսն ընդ միմեանս ի հաշտութեան և ի հաւանութեան պահեալ նուաճէր» (Եզն., էջ 17)։ «Դուք և զորդիս և զժառանգս և զգործակիցս և զնմանողս նոցին սպանէք» (Բուզ., էջ 35)։ «Պարտ էր մեզ զխափանիչս մշակացն զվաղէս խափանել» (Ն. տ., էջ 86)։

Անուղղակի խնդիր դերբայական դարձվածներն են՝

Մատուցման. Դրան շատ հազվադեպ ենք հանդիպում։ Օրինակ՝ «Իսկ նոքա առ սէրն Քրիստոսի յոյժ խնդութեամբ ընդունէին զամենայն չարչարանսն վասն մեծի յուսոյն, որ առաջի պատրաստեալ կայ դստոուէրանապահ համբերողացն» (Եզ., էջ 21)։

Հանգման. «Յայս վստահացեալ վարողացն զնա՝ հանգան աւուրս ինչ ղտեղեօքն» (Խոր., էջ 92)։ «Եւ բարւոյ յիշեցուցանողին հրաման տայ՝ ի բարկութեանն արքայի և յանիրաւ հրամանս՝ յիշեցուցանել զիրան և զմարդասիրելնս» (Ն. տ., էջ 117)։

Անջատման. «Բայց ես այժմ ուրախացայց, հաւ առնելով առաջիկայիցս խմոց բանից, ի սիրելւոյն իմմէ և ճան զշատս արդարախօսողէ» (Խոր., էջ 23)։

Համեմատության. «Զի ոչ իբրև զօտար ոք հրապուրէ զմեզ, և ոչ իբրև զպատրող ոք խաբեբայ մոլորեցուցանէ զմեզ» (Եզ., էջ 170)։

Մեր ընտրանքում հանդիպել ենք մի քանի պարագա դերբայական դարձվածների։ Դրանք են՝

Ձևի. «Եւ ամենայն տղայք աշխարհին իբրև զարս պատերազմողս խիզախէին» (Եզ., էջ 70)։

Նպատակի. «Եդեալ ծունր, խնդրէր զթողութիւն ի վերայ սպանողին իւրոյ» (Բուզ., էջ 183)։

Միասնության. «Որք... ոչ ընդ իւրեանց ծնիչսն հայրն Յուսիկ նայեցան» (Բուզ., էջ 31)։ «Եւ միւս ևս այլ ծաղրագոյն քան զայգ, Միհր աստուած ի կնոջէ ծնանի, եթէ ոք ընդ իւրում ծնողին անկցի» (Եզ., էջ 32)։

Ապառնի դերբայ. Գրաբարի ապառնի դերբայն ունի երկու տեսակի մասնիկներ՝ -ոց, -ի (սիրելոց, սիրելի)։ -Ոց-ով տարբերակը անկախ գործածություն չունի, այն միանում է օժանդակ բային և կազմում գրաբարի վերլուծական ժամանակները։ Դերբայական դարձվածը կազմվում է -ի մասնիկով տարբերակով, որն էլ, սակայն, ունի շատ հազվադեպ կիրառություն։ Դա կատարում է նախադասության մի քանի անդամների պաշտոն։

Ենթակա. Ունի շատ սակավ գործածություն։ «Եթէ բարեբարութեանն վայելելիք լիցին, ո՞ւմ շահ իցէ բարերարութիւննն» (Եզն., էջ 237)։

Ստորոգելի. Ավելի շատ օրինակների ենք հանդիպում։ «Ամենեցուն գիտելի և ծանօթք էին գործք նոցա» (Բուզ., էջ 185)։ «Չեմ իբրև զձեզ անագորոյն, զի անձանց ատելի էք և այլոց թշնամիք» (Եզ., էջ 170)։ «Լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացուցեալ... վասն որոյ՝ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէնջ և փառաւորեալք» (Խոր., էջ 50)։

Որոշիչ. Այն մեծ տարածում չունի։ Օրինակներ. «Արարիչ ...զմանրամաղ փոշիացեալ հողս ջրոյն խոնաւութեամբ զանգանէ, իսկ զ'ի վայր ծորելի բնութիւն ջրոյն՝ սալայատակ տռամա-

ցեալ հողոյն կափմամբ» (Եզ., էջ 33)։ «Եւ ո՞րք ըզս զի ելից ի քանձրադանդաղ ձանձրալի մարմնոյս այսորիկ» (Ն. տ., էջ 155)։

Երբեմն որոշիչն արտահայտվում է երկրորդական նախադասությամբ։ Օրինակ՝ «Դարձեալ միւս ևս իմն ասեն, որ ամենևին չէ հաւատալի. Թէ իբրև մեռանէր Որմիզդ՝ զսերմն իւր յաղբիւր մի արկ» (Եղն., էջ 142)։

Բացահայտիչ. Շատ հազվադեպ է հանդիպում։ Օրինակ՝ «Յայնժամ հետէ սկսաւ արկանել սէր ընդ նոսա՝ իբրև ընդ սիրելիս Աստուծոյ» (Եզ., էջ 195), որտեղ բացահայտիչը կատարում է միասնության պարագայի պաշտոն։

Շատ սահմանափակ կիրառություն ունեն նաև բայասան անդամի դերբայական դարձվածները՝ կազմված ապառնի դերբայով։ Այսպես՝

Անջատման անուղղակի խնդիր. «Ընդէ՞ր ի գործելեաց չարեացն վրէժս պահանջէ» (Եզ., էջ 36)։

Տեղի պարագա. «Յարուցեալ փութանակի դնաց զհետ կոչելեացն քղթին» (Բուզ., էջ 83)։

Միասնության պարագա. «Քանզի բազումք յաղդէ ի մեծ նախարարացն էին. և եղբարք և որդիք և ուստերք. հանդերձ ամենայն սիրելեօք իւրեանց ի մէջ ամրական վայրացն» (Եզ., էջ 125)։

Ապառնի դերբայի -ի մասնիկով տարբերակով դերբայական դարձված քիչ է կազմվում, որովհետև շատ դերբայներ վերածվել են գոյականի կամ ածականի։

Ամբողջ շարադրանքից կարելի է անել հետևյալ եզրակացությունները։

1. Գրաբարում դերբայական դարձվածը կազմվում է բոլոր չորս դերբայներով (անորոշ, անցյալ, ենթակայական. ապառնի)։ Դարձվածի կազմում որպես դերադաս անդամ կարող է հանդես գալ ապառնի դերբայի միայն -ի-ով տարբերակը։

2. Գործածության բարձր հաճախականություն և կիրառության բազմազանություն ունեն անորոշ և անցյալ դերբայներով կազմված դարձվածները։

3. Ենթակայական և առավելապես ապառնի (-ի-ով տարբերակը) դերբայներով կազմված դարձվածները ունեն սահմանափակ կիրառություն։ Դրանք հիմնականում կատարում են պարագական անդամի պաշտոններ։

4. Դերբայական դարձվածները հանդես են գալիս և՛ պարզ, և՛ բարդ նախադասությունների կազմում։ Ըստ որում գործածության բարձր հաճախականություն ունեն պարզ նախադասության կազմում։

5. Դերբայական դարձվածները գրաբարում շատ ծավալուն չեն։ Ավելի շատ տարածված են երկանդամ և եռանդամ դարձվածները։

6. Անորոշ դերբայի կողմնակի ենթական մեծ մասամբ դրվում է տրական հոլովով։

7. Դերբայական դարձվածները հիմնականում ունեն ոճական կիրառություն. դրանցով արտահայտվում են զանազան իմաստներ ու նրբիմաստներ։

ПРИЧАСТНЫЙ ОБОРОТ В ГРАБАРЕ

Г. Б. ТОСУНЯН

Резюме

В грабаре (V в.) причастные и деепричастные обороты образуются с помощью всех четырех причастных форм (инфинитива и причастий настоящего, прошедшего и будущего времен) с разной степенью продуктивности и с разной спецификой. Инфинитив и прошедшее причастие более продуктивны, а будущее (на -ի—i) и настоящее (которое называется также субъектным) причастия малопродуктивны в образовании причастных оборотов.

Причастные обороты в предложении функционируют в качестве главных и второстепенных членов предложения. Они могут употребляться как в простом, так и сложном предложении. Причастные обороты в основном играют стилистическую роль. При помощи этих конструкций выражаются различные смысловые значения и оттенки. В структуре предложения древнеармянского языка причастные и деепричастные обороты имеют большой удельный вес.